Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԶԵՅԹՈՒՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1908 թ. Թուրքիայում երիտասարդ թուրքերը իշխանության գլուխ անցան։ Եվրոպական թերթերը գովում էին երիտասարդ թուրքերի չափավորությունը հեղափոխության ժամանակ. Արևմուտքի ռեակցիոն կառավարությունները կեղծավորությամբ էին մոտենում այդ հեղափոխությանը։

Վ. Ի. Լենինը նշում է, որ եվրոպական պետությունները «Երիտասարդ թուրքերին գովում են չափավորության և զսպվածության համար, այսինքն՝ գովում են թուրքական հեղափոխությանն այն բանի համար, որ նա թույլ է, նրա համար, որ նա չի արթնացնում ժողովրդի ստորին խավերը, չի հարուցում մասսաների իսկական ինքնուրույնություն, նրա համար, որ այդ հեղափոխությունը թշնամի է Օսմանյան կայսրության մեջ սկսվող պրոլետարական պայքարին,— և միաժամանակ շարունակում են առաջվա նման կողոպտել Թուրքիան»[1]։

Հեղափոխությունից շատ ժամանակ չէր անցել, երբ Կիլիկիայում սկսվեց Ադանայի հայերի կոտորածը։ Օսմանյան կայսրության տերիտորիայի բնակիչների կյանքի և ունեցվածքի ապահովության մասին երիտասարդ թուրքերի խոստումները հօդս ցնդեցին և Ադանայի ու նրա շրջակա գյուղերի հողերը ներկվեցին անմեղ երեխաների, կանանց ու ծերերի արյունով։

Բնական է, որ նման պայմաններում երկրում սկսված ոգևորությունը կարճ ժամանակից հետո պետք է փոխվեր խոր հիասթափության և այդպես էլ եղավ։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Կիլիկիայի հայությունը խոր հիասթափություն ապրեց։ Կոտորածների և անլուր տանջանքների հետ միասին աղքատությունը թափանցեց ամենուրեք։ Թուրքական պաշտոնյաների հարստահարությունները Կիլիկիայում և Զեյթունում ժողովրդին հասցրել էին ծայր աղքատության։

1895—1896 թթ. դեպքերից հետո, մինչև իմպերիալիստական առաջին պատերազմի սկիզբը, լեռնական զեյթունցիները թուրքական իշխանությունների դեմ առանձին պինված ելույթներ չունեցան։ Մինչև պատերազմը սկսվելը Զեյթունի բնակչությունը չէր բարելավել իր տնտեսական դրությունը։ Ընդհակառակը, 1895—1896 թթ. ահռելի պատերազմը աղքատության գիրկն էր նետել դավառակի ողջ բնակչությանը։ 1911 թ. Կոստանդնուպոլսի այրիախնամ հանձնաժողովի կազմած տվյալներից երևում է, որ գյուղաքաղաքի բնակիչները, բացառությամբ վերնախավի, ապրել են աղքատ։ Այդ ժամանակ Զեյթուն այցելողներից մեկը գրում է. «Այցելած բոլոր վայրերում մեջ ոչ մեկ տեղ աղքատությունն այնքան շեշտված, ապրուստի միջոցներն այնքան նեղ ու այնքան դժրն-

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 15, էջ 268—269։

դակ գտա՝ որքան Զեյթունի մեջ։ Հոս 5—6 հոգիե բաղկացած ընտանիք մը ապրեցնելու համար միակ ջորի մը ունեցողը աղքատ չի նկատուիր, և այդ ջորեպանը, հացի դրամ մը շահելու համար ստիպված է ամառ ամիս, օրը 10—12 ժամվան ճամբա քալել ջորիին ետևեն։ Զեյթունի ապրուստի գլխավոր միջոցը այգեգործությունն է։ Տարեկան 4.500 ոսկիի մոտ չամիչ և ոսի կարտածվի, վերեն մինչև Ադիպյե և վարեն մինչև Ջուգուր-օվա և Տեորթ Յոլ։ Երկրորդ կարգի վրա կուգա վարունգի կուտը, տարեկան 1.000 ոսկիի մոտ, զոր գեյթունցիներ (Զեյթունեն և շրջակա գյուղերեն արտածելով) կը տանին ծախել մինչև Երուսաղեմ»[2]։

Այս վկայությունից և վերոհիշյալ հանձնաժողովի զեկուցումից երևում է, որ լեռնական այս գյուղաքաղաքում XIX դարի վերջին և XX դարի սկզբին լուրջ փոփոխություններ էին տեղի ունեցել։ Բնակչության մեծ մասը առաջվա պես զբաղվում էր գյուղատնտեսությամբ (անասնապահություն և երկրագործություն) և արհեստագործությամբ, որոշ մասը զանազան պետական և ազգային պաշտոններ էր վարում։ Ընդհանուր առմամբ մեծ էր պատահական եկամուտներով ապրող բնակիչների թիվը։ Զեյթունից չքացել էր երկաթի և փայտի արդյունահանությունը, որը նախկինում զգալի օգուտ էր բերում բնակիչներին։ Ստեղծված ծանր դրությունը լեռնականներին ստիպում էր իրենց դոյությունը մի կերպ պահպանելու համար թողնել հայրենի գյուղաքաղաքը և գնալ ուրիշ տեղ աշխատելու։ Սա կիսապանդխտության նման մի բան էր, որը բոլորովին չի նկատվել Զեյթունում XIX դարի ամբողջ ընթացքում։ Այդ հանձնաժողովի զեկուցման մեջ կարդում ենք. «Ամենեն աղքատ, ամենեն խղճալի մասն է գործավոր դասակարգը, որ հաճախ ստիպված է մինչև Ատանայի կողմերը երթալ շոր հացի մը ետևեն։ Եթե կարելի բլլար ոևէ ձեռարվեստ մտցնել Զեյթուն, ամենեն մեծ բարիքը պիտի բլլար ատիկա տեղվույն հայության համար։ Նախապես բավական ալ ատաղձի արտածում կա եղեր, բայց, անտառները հետզհետե պակասելով հեռանալով, հիմա դադրած է»[3]։

Եղած տվյալներից պարզվում է, որ բերք չլինելու պատճառով 1907—1908 թթ. Զեյթունի բնակչությունը փաստորեն կանգնած է եղել սովի առաջ։ Զեյթունի 4.000 տուն հայերից 3.000-ը սովամահ լինելու վտանգի տակ են եղել[4]։

Այդ ժամանակ սովն ընդգրկել էր Մուշի, Սասունի, Վանի, Տիվրիկի, Հաճընի, Ալբիսթանի, Զմշկածագի, Խնուսի, Զեյթունի, Ակնի գյուղերը։ Սովյալներին օգնելու նպատակով աքսորից վերադարձած Իզմիրլյան Մատթեոս պատրիարքը մի կոչով դիմեց ամբողջ հայությանը։ Նրա նամակներից մեկում կարդում ենք. «...անոթութենեն մեռնողներու անուններ կը հաղորդվին մեզ, հուսահատութենեն իրենց կյանքը կարճելու փորձողներ կը գտնվին։ Տուն տեղ լքելով փախչողներ կան. խոտի արմատներ սնունդի տեղ կը գործածվին և այս ձմռան խստաշունչ եղանակին դեռատի աղջիկներ և մանկամարդ կիներ, աղաղի մանկտիթ իրենց գիրկը՝ և հագիվ ծածկելով իրենց մերկությունը, կը թափառին լեռ ու ձոր, հաց գտնելու համար»[5]։

---

2 Գ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 92։
3 Նույն տեղում, էջ 92—93։
4 «Մշակ», 1908, 16 նոյեմբերի, № 255։
5 «Նույն տեղում, 18 դեկտեմբերի, № 279։

Համարյա նույնանման վիճակ է եղել նաև Զեյթունում։ «Զեյթուն հաց կը խնդրե ապդեն» վերնագրով իր հոդվածում Կիլիկիայի Սահակ կաթուղիկոսը գրում է, որ Զեյթունի բնակիչները, որոնք «դարեր ի վեր կապրին պատառ մը հացով և իր ձեռատունկ այգիներուն բերքով, այսօր ոչ հաց ունի, ոչ չամիչ»[6]։

Այդ կոչերից հետո սովի ճիրաններում գտնվող մարդկանց համար հայ գաղթօջախներում սկսվեց հանգանակություն։

1910 թ. Զեյթունում տեղի է ունենում մի փոքրիկ միջադեպ։ Մեկ տասնյակից ավելի լեռնականներ, որոնք բանակից խուսափել էին, պե՞տք է ներկայանային Մարաշի զինվորական ատյանին։ Բայց նրանք որոշեցին չներկայանալ և հեռացան Տավրոսի բարձունքները։ Նրանց միացան նաև շրջակա գյուղերից փախած ուրիշ երիտասարդներ։ Մեկ օր, երբ այս խումբն իջնում էր Զեյթուն, հանկարծակի հանդիպեց թուրքական ոստիկանության. սկսվեց հրաձգություն, որից հետո խումբը վերստին հեռացավ լեռները։

Այս դեպքից հետո Զեյթունում սկսվում է նախապատրաստվել մի նոր պոռթկում։ Իմանալով այդ մասին, կառավարությունն ապատ է արձակում այդ կապակցությամբ բռնի կերպով Մարաշ տարված վարդապետ Վաղարշակ Արշակունուն և փոխում է Զեյթունի կայմակամին։ Զեյթուն ժամանած Հալեպի կուսակալին լեռնականները ներկայացնում են մի խնդրագիր հետևյալ բովանդակությամբ։

1. Թեքիր կոչված Խոսրան-խալի վայրը, որը գտնվում է Զեյթունից 6 ժամվա հեռավորության վրա, տրամադրել զեյթունցիներին, որպեսզի գյուղաբաղաքում եղած խիտ բնակչությունից 300—400 տնտեսություն փոխադրվեն այնտեղ, որով հնարավոր կլիներ մի փոքր թեթևացնել քաղաքում մնացածների տնտեսական դրությունը։

2. Ներում շնորհել Մարաշում գտնվող բանտարկյալ և փախստական զեյթունցիներին։

3. Թույլ տալ, որպեսզի այդ տարվա տուրքերի մի մասը մյուս տարի վճարվի։

4. Զեյթունցիներին տրամադրել 1000 ոսկի փոխառություն մեկ տարի ժամանակով[7]։

Կուսակալը խոստացավ կատարել լեռնականների խնդիրը և գյուղաբաղաքում մեկընդմի՞շտ վերացնել զորանոցը։

Սակայն հավանական է նրա այդ խոստումը կամ հանդիպեց կառավարության դիմադրությանը և կամ էլ սուտ խոստում էր։ Զորանոցն այդպես էլ մնաց։

Նշենք, որ այդ ժամանակաշրջանում նոր կառավարություններ զգալի չափով պակասեցրել էր Զեյթունի զորանոցում եղած զորքի քանակը։ Սակայն սա պարզապես լեռնականների աչքերին թոզ փչել էր. իրականում կառավարություններ տանում էր նրանց նկատմամբ այլ քաղաքականություն։ Երիտասարդ թուրքերի կողմից նշանակված պաշտոնյաները շրջակա մահմեդական բնակչությանը գրգռում էին լեռնականների դեմ։ Զորանոցի զորքերի թվի պակասեցնելու և թնդանոթները հրապարակից հանելու մասին «Մշակ»-ի Մերսինի թղթակիցը 1911 թ. գրում էր. «Երկար տարիներե ի վեր կառավարություններ

---

6 Նույն տեղում, 12 նոյեմբերի, № 251։

7 «Մշակ», 1910, 1 հունիսի, № 116։

մեծ թնդանոթներ կը պահեր Զեյթուն, 95-ի դեպքերուն, ատոնք նույնիսկ հայերուն ձեռքն անցան պրանոցին 500 անձնատուր զինվորներուն և զենքերուն հետ, որ նույնիսկ գործածեցին զանոնք էդհեմ փաշայի զորաց դեմ։

Այժմ, որ՝ նոր կարգերու բերմամբ՝ լոկ բռնավոր ռեժիմեն բխած՝ ընդդիմություններն անհետացած են, կառավարությունը ոչ միայն պակասեցուց տեղվույն զորքը—100 չափ միայն կա այժմ— այլև ուզեց վերցնել թնդանոթները։ Բայց, որովհետև անոնց փոխադրությունը շատ դժվար էր, սուլթան Համիդի մը համառությունը միայն կրցած էր զանոնք Զեյթունի լեռներն ի վեր հասցնել տալ, այդ փոքր հայաքաղաքը կործանելու համար կառավարությունը դրամ տալով զեյթունցվոց՝ կտրել տվավ զանոնք։

Կառավարության այս գովելի արարքը, սակայն, սրտաբեկություն պատճառող պարագա մը դարձավ շրջակա մահմեդականներուն համար։

Զուր կասկած և անմիտ մտահոգություն»[8]։

1911 թ. վերջերից սկսած Կիլիկիայի մի շարք վայրերում և Զեյթունում բանակից խուսափողների թիվն ավելի է ստվարանում։ Կառավարական պաշտոնյաներն իրենց զինված ուժերի միջոցով սկսում են հետապնդել փախստականներին, սակայն ապարդյուն, քանի որ ժողովուրդն ամեն կերպ պաշտպանում էր նրանց. «Կառավարության զինվորները,— գրում է «Մշակ»-ը,— այժմ Զեյթուն, Բեորթ-Յոլ, Սուեդիա և այլն և այլն հայ քաչախներ կը փնտրեն։ Շատ տեղեր ալ գացած փախստականին տան մեջ տեղավորված են, կուտեն, կուտեցնեն և կը նախատեն տնեցիք... գի, վերջապես, իրենց տղան, որ զինվոր էր, փախած է։ Հարցնողն ո՞վ, փնտրողն ո՞վ»[9]։

Թուրքական իշխանությունները 1912 թ. վերջերից և 1913 թ. սկզբներից սկսեցին ավելացնել զորքերի քանակը Կիլիկիայում. «Կապանցի թուրք ավազակապետի մը ղեկուցման վրա, կառավարությունը փոխանակ զինքը ձերբակալելու՝ ահագին զորքեր է ղրկած Կապան, Անդրուն, Զեյթուն և ուրիշ տեղեր...»[10]։

Այդ զորքերի կուտակումները կառավարությունը կատարում էր լեռնական փախստականներին զսպելու համար։ Սկսած 1912 թ. վերջերից և 1913 թ. սկզբներից Կիլիկիայում էլ ավելի սրվեցին մահմեդականների ու հայերի միջև եղած թշնամական հարաբերությունները։ Ադանայի կոտորածի ամպերը կամաց-կամաց իրենց սև ու մոայլ կերպարանքով նորից կախվեցին Կիլիկիայի հայության գլխին։ Հաճախակի էին դառնում հայ կանանց և աղջիկների առևանդումը։

Թուրքական իշխանությունները չէին կանխում վերը նշված դեպքերը, ընդհակառակը, իրենք էին ստեղծում նոր միջադեպեր դրությունն էլ ավելի լարելու նպատակով։ Այդ քաղաքականությունն ավելի էր գրգռում հայ և մահմեդական բնակչությանը իրար դեմ և ուժեղացնում ատելությունը միմյանց նկատմամբ։ Պետք է նշել նաև, որ կառավարությունը, տեսնելով, որ Զեյթունի և Հաճընի մի խումբ հայեր հրաժարվելով զինվորագրությունից պատսպարվում են լեռներում, սկսեց այնտեղ զորք կուտակել։

8 «Մշակ», 1911, 22 ապրիլի, № 82։
9 «Մշակ», 1912, 22 հունվարի, № 14։
10 «Մշակ», 1913, 6 մարտի, № 49։

«Լուր կա,— գրում է «Մշակ»-ը,— թե օրերս Ադանայեն բանի մը զումարտակ զորք և լեռնային թնդանոթներ ղրկած են Մարաշի կողմերը, հավանաբար Զեյթուն և Ուլնիո շրջակայքը։

...Ուլնիո դավառին գանգան կետերու վրա, ինչպես և Զեյթուն, արդեն ատենե մը ի վեր զինվորներ հավաքված են, առանց այն ալ դժվարին հաղորդակցությունը անհնար դարձնելով»[11]։

Երիվ կեղծում են թուրք ջարդարար-ցեղասպանները, երբ պնդում են, թե իրենք հայերի տեղահանության մասին սկսել են մտածել պատերազմն սկսվելուց հետո, թե նախկինում այդպիսի մտադրություն չեն ունեցել։ Դեռևս 1913 թ. մայիսին Կոստանդնուպոլսի պատրիարք Արշարունի եպիսկոպոսը մի թղթիր է ուղարկում մեծ վեզիր Մահմուդ Շեվքեթ փաշային, ուր նրան տեղեկացնում է, որ Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի հայությունը կանգնած է կոտորածների վտանգի առջև։ Այդ թղթիրի մեջ կարդում ենք. «Վերոհիշյալ տեղեկություններից երևում է նույնպես, որ դժբախտ հայ ժողովուրդը, սպառնացված, մի կողմից, ջնջվելու և, մյուս կողմից ենթակա, պաշտոնյաների բռնապետական, անտանելի ճնշման, ընկել են աննկարագրելի ահաբեկման մեջ։ Երկրագործները չեն համարձակվում դուրս գալ գյուղերից գնալու իրենց դաշտերը հերկելու. ժողովրդի մյուս դասակարգերը նույնպես չեն կարողանում զբաղվել իրենց գործերով։ Բացի դրանից, հայերի մի մասը փրկության ուրիշ ելք չգտնելով, քան գաղթականությունը, խմբերով, ինչպես հին ռեժիմի օրով էր, ձեռք են առնում պանդխտության ցույը»[12]։

Թղթիրի վերջում հուսահատված պատրիարքը գրում է. «Այս դրությունը ցույց է տալիս, որ հայերն այլևս իրավունք չունեն ապրելու Օսմանյան կայսրության մեջ։

Որովհետև իրերի այս դրությունը պետք է հետևանք ունենա հայ տարրի չնջումը վերոհիշյալ երկրներում, և կառավարության բազմապատիկ հավաստիացումներն այն մասին, թե միջոցներ են ձեռք առնված երաշխավորելու մեր ազգակիցների պատիվը, կյանքը և գույքը, դեռ ոչ մի արդյունք չունեցան և այլևս ոչ մի բան չէ մնում ավելացնելու այն աղերսներին, գանգատներին և բողոքներին, որ ես լսեցնել տվի մինչև այսօր, ուստի ինձ մնում է միայն կոչ անել, հայ ժողովրդի վիճակի համար, ժողովրդի, որ ընկերությունից արտաքսված է օսմանյան պետության և ժողովրդի խղճմտանքին և պատասխանատվության և քաղաքակիրթ աշխարհի գթության»[13]։

Ինչպես ճիշտ կերպով նկատել էր պատրիարքը, դեռ շատ վաղուց երիտասարդ թուրքերի կառավարության կողմից տարվում էր հայերի ոչնչացման քաղաքականություն, որը ավելի ուժեղացավ պատերազմի նախօրյակին և կիրառվեց նրա ժամանակ։

1913 թ., ինչպես արդեն ասվեց, թուրքական կառավարությունն սկսեց զորքեր կուտակել Կիլիկիայում և Զեյթունում։ Այդ բանը նկատում է Հալեպի ռուսական հյուպատոս Վլադիմիր Զիմերմանը, որն անմիջապես պահանջում է Հալեպի կուսակալից՝ հարցնելով նրան. «Օսմանյան կառավարությունը պա-

11 Նույն տեղում, 10 մարտի, № 53։

12 Նույն տեղում, 4 հունիսի, № 120։

13 Նույն տեղում։

տերադմի մե՞ջ է Զեյթունի հայության հետ, թե՞ անոնք ապստամբած են կառավարության դեմ, որ դորք և թնդանոթ կը ղրկե անոնց վրա։

Մենք հիմա ստիպված ենք մեր Կ. Պոլսո դեսպաններուն հաղորդել թուրք կառավարության այս սխալ ընթացքը, թե խաղաղ և իր գործերով զբաղված ժողովրդի մը վրա զինվորական առաքումներ տեղի կունենան»[14]։

Ռուսական հյուպատոսի այս կտրուկ պահանջներից հետո Հալեպի թուրքական իշխանություններն ստիպված եղան ավելի զգույշ լինել լեռնականների նկատմամբ. այլապես հնարավոր էր, որ հենց այդ ժամանակ նրանք պրովոկացիոն նպատակով մի միջադեպ սարքեին Զեյթունում։ Եվ դա պետք է տեղի ունենար մի այնպիսի ժամանակ, երբ Տավրոսի լեռներում գտնվող գյուղաքաղաքում ոչ ոք չէր մտածում հարձակվել թուրքական բանակի վրա։

1914 թ. օգոստոսին սկսվեց առաջին իմպերիալիստական սպանդը, որին ամիսներ անց մասնակցեց Թուրքիան։ Սանձաղերծված պատերազմի հետևանքով Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայության գլխին կուտակվեցին փոթորկաբեր ամպեր։ Թուրքական կառավարությունը անմիջապես սկսեց զինվորագրությունը, որին ենթակա էին 21-ից մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ։ Այս իրադարձությունը առավել տհաճ էր լեռնականների համար, որովհետև նրանք գիտեին, որ զինվորագրվելով թուրքական բանակին, պետք է կռվեին Ռուսաստանի դեմ։ Լեռնականները գտնում էին, որ «ամեն ինքնաճանաչ հայ պիտի նախընտրե մեռնել, քան կռվել ի նպաստ Թուրքիո»[15]։

Պետք է նկատի ունենալ մի հանգամանք ևս. թուրքական բանակում հրամանատարներն ու զինվորները հենց սկզբից բիրտ վերաբերմունք էին ցույց տալիս հայերի և այլազգիների հանդեպ։ Ստեղծված անտանելի պայմաններին չդիմանալով, քրիստոնյաների մի մասը փախավ բանակից և թաքնվեց իրենց գյուղերում, ոմանք էլ թողեցին Թուրքիան և հեռացան օտար երկրներ։

Նման պայմաններում կառավարությունը սկսեց կազմել զինվորագրվելու հասակ ունեցող զեյթունցիների ցուցակը, բայց սկզբնական շրջանում ձեռնպահ մնաց նրանցից որևէ մեկին զինվորական ծառայության կանչելուց։ Չնայած դրան, գյուղաքաղաքի մի քանի տասնյակ բնակիչներ չզինվորագրվեցին և, խուսափելով թուրքական բանակում ծառայելուց, թողեցին Զեյթունը ու հեռացան լեռները։

Պատերազմն սկսվելուց հետո Զեյթունի գորանոցը դարձել էր մի հավաքակայան, որտեղ զինվորագրվում էին ոչ միայն Զեյթունի, այլև շրջակա ուրիշ գավառակների զինապարտները՝ անկախ ազգային պատկանելությունից։ 1914 թ. աշնանը լեռներում ապաստանած զեյթունցիները, կենսամթերք ձեռք բերելու նպատակով, հարձակվեցին 60 հոգուց բաղկացած անտերունցի թուրքերի մի խմբի վրա, որը մեկնում էր Անձոր զինվորագրվելու։ Այս մասին հեռագրով հայտնվեց կենտրոնական կառավարությանը։ Ըստ ականատեսներից մեկի վկայության, Զեյթունի գավառակին մոտիկ ապրող թուրքերը ասում էին. «Մեր Մոսկոֆը մեր քով կա»[16]։ Այսինքն՝ նրանք հասկացրել էին կառավարությանը, որ միայն Ռուսաստանը չէ Թուրքիայի թշնամին, Կիլիկիայում եղած

14 «Մշակ», 1914, 20 փետրվարի, № 37։

15 Մատենադարան, այլ և այլ հեղինակների արխիվ, թղթ. 240ա, վավ. 75, էջ 7։

16 Նույն տեղում, էջ 15։

Զեյթունը ռուսական քաղաքականությունն է պաշտպանում և անհրաժեշտ է գոնե այս անգամ վերջ դնել նրա դոյությանը։

1914 թ. աշնանը լեռնականներին լրիվ զինվորագրելու նպատակով Մարաշից Զեյթուն մեկնեց Հայդար փաշան։ Լսելով նրա գալստյան մասին, Զեյթունի ավագանին ժողով գումարեց, որտեղ որոշվեց փաշային դիմավորել ինչպես հարկն է և ապստամբություն չբարձրացնել։ Սակայն ժողովի մասնակիցներից մի քանիսը, ընդհակառակը, պահանջեցին չընդունել փաշային և առաջարկեցին դիմադրել։ Ժողովի կողմից այս առաջարկը մերժվեց։

Ժամանելով Զեյթուն, փաշան քաղաքի 4 թաղերի բնակիչներից պահանջում է ներկայացնել այն փախստականներին, ովքեր թալանել են Անտերունի զորակոչիկներին։ Միաժամանակ Հայդար փաշային հաջողվում է Կ. Պոլսի իշխանությունների միջոցով ազդել Կիլիկիայի կաթողիկոսի վրա, որպեսզի վերջինս պաշտոնանկ անի Զեյթունի հոգևոր առաջնորդին։ Փախստականների ընտանիքները չկատարեցին փաշայի կամքը։ Կատաղած փաշան կարգադրեց գավառակի զինվորական բոլոր ծախսերը դնել քաղաքի բնակչության վրա։ Նա հայտարարեց, որ այդ կարգադրությունը կվերացնի միայն այն դեպքում, երբ կհանձնվեն փախստականները։ Այս միջոցառումով նա ձգտում էր դժգոհություն առաջացնել նրանց մոտ. ում ընտանիքներից փախստականներ չկային, և դրանով ժողովրդին մասերի բաժանելով՝ իրար հակադրել։

Զեյթունի վերնախավը կարծում էր, որ եթե փախստականները հանձնվեն, փաշան կհեռանա գյուղաքաղաքից։ Նրանք սկսում են համոզել լեռներում ծվարածներին՝ վայր դնել զենքը և հանձնվել։ Զեյթունի այդ ժամանակվա քաղաքապետ Նազարեթ Չաուշը (Նորաշխարհյանը) անմիջապես իր եղբոր տղային ղրկում և հանձնում է կառավարությանը։ Այս դեպքից հետո փախստական լեռնականները, բացառությամբ երկու հոգու, մի քանի օրվա ընթացքում իջնում են և հանձնվում թուրքական իշխանություններին։ Մնացածները Գարրկեար թաղից էին։ Փաշան կարգադրում է ամբողջ զինվորական ծախսերը վերցնել Զեյթունից և դնել այդ թաղի բնակչության վրա։ Լսելով փաշայի հրամանի, այդ թաղը պետք է կերակրեր զինվորներին և հոգար նրանց պետքերը։ Մնացած երիտասարդները, տեսնելով, որ իրենց պատճառով տուժում են թաղի բնակիչները, ստիպված վերադառնում են Զեյթուն և հանձնվում։ Դրանից հետո փաշան անմիջապես ձերբակալում է Նազարեթ Չաուշին։ Կառավարությունը ոչ միայն Զեյթունի փախստականներին իբրև օրինազանցներ էր նկատում, այլև «ամբողջ Զեյթունը կը նկատեր մի ըմբոստության կենտրոն»[1]։ Այդ նպատակով էլ փախստականներին ձերբակալելուց հետո փաշան պահանջում է լեռնականներից՝ հանձնել իրենց զենքերը։ Այս պահանջը նույնպես կատարվում է։

Հայդար փաշան լավ գիտեր, որ Զեյթունը հանդիսանում է Կիլիկիայի հայության ամենաուժեղ ամրոցը և անպայման ցանկանում էր այն մեկուսացնել մնացած տեղերի հայերից։ Լեռնականների զենքերը հավաքելուց հետո նա սկսում է աստիճանաբար խստացնել ռեժիմը։ Իր ձեռքի տակ եղած զինվորներին մաս-մաս ուղարկում է Արեգին, Ֆոնուզ, Կապան, Շիվիլիկի գյուղերը և զինաթափ անում նրանց բնակիչներին։ Զինվորները վերադառնում են՝ իրենց հետ բերելով մեծ քանակությամբ զենք. «Ամեն կողմեն գուլումի աղաղակներ էին, որ կը բարձրանային, գյուղերը ցրվող զինվորները անոթի գայլերու պես

[1] Նույն տեղում, էջ 53։

անխիղճ և անողորմ դավադրանի հարվածներու տակ մահացնել սկսած էին շատ մը հայերու։ Ժողովուրդը այս բանը տեսնելով շվարած սկսած էր առանց բացատրության հանձնել իր գենքերը, սկսյալ որսի հրացաններեն մինչև պատերազմական գենքերը»[18]։

Տեսնելով, որ դավառակի բնակչությունը զինաթափ է լինում առանց դիմադրության, փաշան գյուղաքաղաքի բնակիչներից պահանջում է հանձնել ոչ միայն փախստականների, այլև մնացածների գենքերը՝ նպատակ ունենալով զինաթափ անել լեռնականներին և դրանից հետո ծնկի բերել նրանց, մի բան, որին չէին հասել թուրքական դավիչները դարեր շարունակ։ Ժողովուրդն սկսում է գենքերը հանձնել։ Ըստ ականատես Վ. Գարանֆիլյանի, փաշան Զեյթուն գյուղաքաղաքի ժողովրդից հավաքեց 20, իսկ շրջակա գյուղերից 15 հազար տարբեր տեսակի գենքեր։ Մի քանի օրվա ընթացքում գյուղաքաղաքում բանտարկվածների թիվը հասավ 60-ի, իսկ շրջակա գյուղերից՝ 30-ի[19]։

Այսպիսով, Մարաշի կառավարիչներին այս անգամ շատ հեշտ «տեսակ մը խորամանկությամբ հաջողած էր քյուչուկ (պստիկ) Մոսկոֆը զինաթափ բնել»[20]։

1915 թ. ձմռանը Զեյթուն են վերադառնում այն հայ զինվորները, ովքեր ծառայում էին օսմանյան բանակում։ Նշենք, որ Զեյթունի վերնախավը պատերազմի նախօրյակին և նրա ընթացքում արդեն նախկինը չէր, նրա մի մասը կապված էր թուրքական պաշտոնյաների հետ և չէր ցանկանում, որ թուրքական բանակում գտնվող զեյթունցի զինվորները վերադառնան՝ խուսափելով ամեն տեսակի անախորժություններից։ Նրանք միամտաբար կարծում էին, որ եթե ծառայության մեջ գտնվողները չվերադառնան, բնակչությանը ոչ մի վտանգ չի սպառնա։ Այդ օրերին լուր է հասնում Զեյթուն, որ Տեորթ-Յոլի ամբողջ արու բնակչությունը բշվել է հեռավոր վայրերում։ Այս լուրը ավելի է զգաստացնում լեռնականներին։ 1915 թ. փետրվարին Զեյթունի զորանոցում կային 400 զինվորներ, իսկ կառավարական շենքը պաշտպանում էին 150 ոստիկաններ։ Բնական է, այս զինված բանակի կողքին կանգնած զինաթափ եղած զեյթունցիները, նրանց զիմադրություն ցույց տալու ցանկություն ունենալու դեպքում էլ, շատ դժվարին կացության մեջ պետք է ընկնեին։ Այդ օրերին մի հարմար առիթ ներկայացավ, որը օգտագործելու դեպքում լեռնականները կարող էին հաջողության հասնել։ Բանն այն է, որ թուրքական հրամանատարությունը զորանոցի զինվորներից վերցնում է նոր գենքերը և նրանց փոխարեն տալիս հին[21]։ Իմանալով այդ մասին, քաղաքում ժողով է գումարվում, որտեղ որոշվում է Մարաշի ճանապարհին Կյուրեղտիրի կիրճի մեջ փախստական զինվորների միջոցով բռնագրավել գենքը։ Սակայն Զեյթունի վերնախավը այդ մասին հայտնում է կառավարությանը։ 1915 թ. փետրվարի 15-ին գյուղաքաղաքում սկսվում է ապստամբության նախապատրաստվող ակտիվ մարդկանց ձերբակալությունը։ Երկու օրվա ընթացքում ձերբակալվում է 60 հոգի, որոնց նկատմամբ գործադրվում են բռնություններ։

1915 թ. փետրվարի 24-ին, այս դեպքերից մի քանի օր հետո, դավառա-

18 Նույն տեղում, էջ 36։
19 Նույն տեղում, էջ 36—37։
20 Նույն տեղում, էջ 41։
21 Նույն տեղում, էջ 53։

կում շրջող փախստականների խմբերից մեկը Զեյթունից Արեգին գյուղը տանող ճանապարհին հանդիպում է թուրքական ժանդարմական մի պահակախմբի։ Լեռնականները ջախջախում են թուրքերին և վերցնում նրանց մոտ եղած նոր տեսակի զենքերը։ Հետանալիս նրանք կտրում են Զեյթունի և Մարաշի միջև հեռագրական կապը։

Վ. Գարանֆիլյանի հուշերից և ժամանակի հայ պարբերական մամուլում տպագրված հոդվածներից երևում է, որ այդ փասար լրջորեն անհանգստացրել է Զեյթունում գտնվող թուրքական կայմակամին և պաշտոնյաներին, որոնք կարծել են, թե կրկնվելու է 1895 թ. ապստամբության նման մի բան։ Այդ վիճակից դուրս գալու համար, կայմակամը դիմում է Զեյթունի վերնախավին. վերջինս նրան խոստանում է, որ եթե փախստականները հարձակվեն քաղաքի վրա, իրենք իրենց կողմնակիցների հետ միասին կպաշտպանեն այն։ Եվ այսպես, թուրքական իշխանությունների հետ կապված գյուղաքաղաքի վերնախավը ամեն գնով ցանկանում էր մարել լեռնականների մեջ բռնկվող ապրստամբության հրդեհը և ժողովրդին ենթարկել թուրքական իշխանություններին։

Լսելով գյուղաքաղաքի բնակիչների մի փոքրիկ խմբի ապստամբության մասին, Զեյթունի շրջակա գյուղերի աղգարնակչությունը թուրքական հարձակումից վախենալով, սկսում է 1895 թ. օրինակով ստիպողաբար տեղափոխվել Զեյթուն։ Վերնախավն ամեն կերպ աշխատում է, ոչ միայն կարել ապրստամբների և քաղաքի բնակիչների միջև եղած կապը, այլև դարձել գյուղերի բնակչության մուտքը դեպի գյուղաքաղաք։ «Ազգայական համագումար ժողովն իր այլակրոն նախագահով, որովհետև գայմագամն այլևս մասնակցել սկսած էր իրենց ժողովներուն, երկրորդ անակնկալի մը դեմ գնալով դիմեր սկսավ ամեն ճիգ թափել, որպեսզի դեպի Զեյթուն բրած գաղթը դադարի, սակայն անօգուտ ջանարկներ էին, ժողովուրդը իր բան տարվա առաջ տեսածը կը կրկներ այդ օրս»[22]։

Որոշ ժամանակ անց ապստամբած խմբերը իրար միանալով, ամրացան Զեյթունի վանքում։ Ապաստանելով այնտեղ, նրանք նպատակ ունեին ոտքի հանել գյուղաքաղաքի բնակիչներին, գրավել թուրքական կառավարական տունը, զորանոցը, լեռնականներին պաշտպանել վերահաս վտանգից։ Այսպիսով, Պերդնկա լեռան վրա կառուցված Զեյթունի հինավուրց վանքը դարձավ ապրստամբության կենտրոն։ Եթե մինչ այդ տեղի ունեցած բոլոր ապստամբությունների ժամանակ Զեյթունն էր հանդիսացել ապստամբության կենտրոնը, ապա այժմ այն տեղափոխվել էր վանք, որի թագի ամբողջ բնակչությունը համակրում էր ապստամբներին։

Վանքում ապաստանածները թուրքական իշխանություններից պահանջում են ազատել բանտարկված 60 երիտասարդներին, կառավարչատունը և զորանոցը հանձնել հայկական նորահաստատ կառավարությանը (այսպես էին կոչում նրանք իրենց), հետանալ Զեյթունի սահմաններից։ Վերջապես, պաշտոնյաները և զինվորները Զեյթունից հետանալով պետք է վերցնեին իրենց անձնական իրերը, իսկ մնացածը պետք է մնար ապստամբներին[23]։

Այս պահանջները կատարելու համար նրանք 24 ժամ ժամանակ են տալիս կայմակամին և սպասում պատասխանի։ Կայմակամն անմիջապես հրավիրում

22 Նույն տեղում, էջ 89։
23 Նույն տեղում, էջ 93։

է խորհրդակցություն, որին մասնակցում են նաև Զեյթունի վերնախավի ներկայացուցիչները։ Կեղծակամբ ժամանակ շահելու համար բանտից անմիջապես ազատում է բանտարկյալներին, դիտմամբ ձգձգում է բանակցությունները վանքում եղած ապստամբների հետ, մինչև որ Մարաշից Զեյթուն է ժամանում թուրքական բանակի 300 հոգուց բաղկացած ջոկատը։

Ուսումնասիրությունը մեզ բերում է այն եզրակացության, որ չնայած Զեյթունի աղայական խավի կողմից ապստամբություն կանխելու բոլոր ջանքերին, այնուհանդերձ ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապստամբության կողմնակից էր։ Եթե ապստամբներն առանց հապաղելու իջնեին քաղաք, նրանց հոգից կգնար բնակչության ճնշող մեծամասնությունը, բացառությամբ քաղաքի վերնախավի, որն այլևս ի վիճակի չէր լինի ազդել դեպքերի հետագա ընթացքի վրա։ Սակայն ապստամբների հապաղելը և գործուն միջոցների չդիմելը թուրքական իշխանություններին հնարավորություն է տալիս զինվորական ուժերի թիվն ավելացնելու հետ միասին միջոցներ որոնել ապստամբների և ժողովրդի միջև եղած կապը թուլացնելու և վանքում պատսպարվածներին մեկուսացնելու համար։ Ապստամբության ղեկավարների սխալ տակտիկայի հետևանքով ապստամբները հենց սկզբից անցան ինքնապաշտպանության, որը և կործանարար ազդեցություն ունեցավ նրա ելքի համար։ Չի կարելի չնշել նաև այն, որ ժողովրդի մոտ եղած զենքը հավաքելը նրանց մի մասի մոտ թերահավատություն էր առաջացրել ապստամբության հաջող ելքի նկատմամբ, իսկ վերնախավը ոչ մի միջոցի առաջ կանգ չէր առնում ապստամբությունն իր սաղմնային վիճակում խեղդելու համար։

Կարճ ժամանակում թուրքական իշխանություններն ավելացնում են Զեյթունում եղած զորքի թիվը, որն սկզբնական շրջանում հասնում էր 5.000-ի[24]։

Ապստամբությունից լեռնականներին հետ պահելու գործում մեծ դեր խաղաց Կիլիկիայի Սահակ Խապայան կաթողիկոսը։ Զեյթունցիներին դիմելով՝ իր նամակներում նա անընդհատ այն միտքն է հայտնել, որ անհրաժեշտ է հպատակվել օսմանյան կառավարությանը։ Ինչպես նշում են այդ դեպքերի մասնակիցները, կաթողիկոսը, դիմելով լեռնականներին, փորձում էր համոզել, թե հին ժամանակներն անցել են, այժմ անհրաժեշտ է ազգը հնազանդության միջոցով պահպանել վերահաս վտանգից։

Ժամանակակիցների վկայությամբ, ապստամբության օրերին Սսի Սահակ կաթողիկոսից ստացվում է մի չարաբաստիկ հեռագիր, որը նախապատրաստվել է Սիրիայի թուրքական բանակի հրամանատար Ջեմալ փաշայի դրդմամբ։ Երիտասարդ թուրքերի այս պարագլուխը շատ լավ գիտեր, որ Կիլիկիայում կուտակված է ստվար հայություն, որի մեծ մասը պատրաստ է հարկ եղած դեպքում զենքը ձեռքին մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել իր ժողովրդի և իր ընտանիքի պատիվը։ Այդ պատճառով էլ նա համոզում է կաթողիկոսին անել ամեն ինչ, որպեսզի Զեյթունի, Հաճընի և Կիլիկիայի այլ վայրերի հայերը անվերապահորեն ենթարկվեն թուրքական կառավարության կողմից ձեռնարկված բոլոր միջոցառումներին։ Ինչ խոսք, Կիլիկիայի հայությունը տեղահան անելու իր դիվային ծրագիրը կենսագործելու ընթացքում նա ամենայն հավանականությամբ խոստացել է օգնություն և պաշտպանություն Կիլիկիո

---

[24] Տ. Անդրեասյան. Զեյթունի տարեգրությունը և նուսարիս ապստամբությունը։ Գ. տպագրություն. Հաբեպ. 1935, էջ 21։

տեղահան եղած ժողովրդին, եթե հարկը պահանջեն»[25]։ Ժամանակակիցների վկայությամբ, «Սահակ կաթողիկոսը կը հորդորեն Զեմալ փաշայի հրամանը իր բոլոր թեմերուն, եկեղեցվո պաշտոնյաներուն միջոցով, և մասնավոր եկեղեցականներ կը ղրկեն Զեյթուն, Հաճըն, Տեորթ-Յոլ, որպեսզի կացության բացառիկ դժվարությունները հաղորդեն ժողովրդին[26]։ «Հիմա միայն բացարձակ հնազանդությամբ է, որ պիտի կրնանք ապրել մեր արդարասեր և հպատակասեր կառավարության հետ»[27],— ասել է ամեն անգամ իր նամակներում կաթողիկոսը, առանց հասկանալու, որ իր անդեն հոտը հանձնում է դինված գայլերին, որ միևնույն է, թուրքական կառավարությունը հայակործան իր քաղաքականությունից հրաժարվողը չէ։ Խեղճ կաթողիկոս։ Քաղաքականությունից հետո մի մարդ էր նա, և կարճ ժամանակից հետո միայն հասկացավ հայ ժողովրդի դլխին եկած ողբերգության սարսափելիությունը։ Ժողովրդի տեղահանությունից որոշ ժամանակ անց նրան նույնպես առաջարկվեց թողնել իր նախորդների դարավոր աթոռանիստը՝ Սիսը և գնալ Հալեպի դավառակներից մեկը և խորհել իր հոտի հետ պատահած, մինչև այդ իր նմանը չունեցող, դարհուրելի ոճիրի մասին։ Տեղահանությունից որոշ ժամանակ անց թուրքական կառավարության կարգադրությամբ իրար միացվեցին Սսի և Ադթամարի կաթողիկոսությունները, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները։ 1916 թ. հուլիսի 19-ին կաթողիկոսին հանձնվեց մի «Կանոնագիր հայոց կաթողիկոսության և պատրիարքության» անունով, որն ստորագրված էր սուլթանի և նրա բոլոր մինիստրների կողմից։ Այդ կանոնագրի առաջարանում գրված է. «Սսո և Ադթամարի հայ կաթողիկոսությունները միացված և Կ. Պոլսո ու Երուսաղեմի պատրիարքություններն ալ այս կաթողիկոսության վրա ավելացված են։ Օսմանցի հայերնուն ընդհանուր հոգևոր նախագահությունն այս կաթողիկոսության և պատրիարքության կը պատկանի և բոլորովին կտրված են իրենց կապն ու հարաբերությունները Էջմիածնի կաթողիկոսության հետ։

Կաթողիկոսին ու պատրիարքին բնակավայրերն է Երուսաղեմի Ս. Հակոբի վանքը, և իր հոգևոր շրջանակն են Օսմանյան երկրները»[28]։

Այսպիսով, այս կանոնագրով օսմանյան իշխողները փաստորեն վերջ դրեցին հայ երկու պատրիարքություններին և կաթողիկոսություններին, այն անջատեցին Էջմիածնի Մայր աթոռից։ Սահակ Խապայանն ստիպված էր հաստատել վերը նշված կանոնագրությունը և իրեն կոչել «Սահակ սրբազնագույն կաթողիկոս Հայոց Թուրքիո և պատրիարք Ս. Երուսաղեմի և Կ. Պոլսո»։

Վերը նշված հեռագրերն ու նամակները, Զեյթունի վերնախավի մեծ մասի բռնած դիրքը, որի մասին արդեն մենք ասացինք, ապստամբներին անջրպետեց լեռնագավառի գյուղերի բնակչությունից, որը և դարձավ ապստամբության հրդեհը մարելու հիմնական պատճառներից մեկը։ Զեյթունի ապստամբները մոտ մեկ ամիս նստել էին վանքի պարիսպների ներսում։ Այդ ժամանակ թուրքական պաշտոնյաները, վերականգնելով հեռագրական կապը Մարաշի հետ, բաղարի բնակչությանը խոստանում են, որ նրանց նկատմամբ ոչ մի վատ բան չի արվի, եթե հրաժարվեն ապստամբներին միանալու մտադրությունից։

---

25 «1915, Ադետ և վերածնունդ», Փարիզ, 1952, էջ 29։

26 Նույն տեղում։

27 Մատենադարան, ..., թղթ. 240ա, վավ. 75, էջ 113։

28 «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո», էջ 933։

Փետրվարի ընթացքում Զեյթունի վերնախավը մի քանի անգամ պատգամավորություն է ուղարկում ապստամբների մոտ և հորդորում նրանց՝ հրաժարվել իրենց մտքից, սակայն ապստամբ զեյթունցիները որոշում են իջնել քաղաք, գրավել զորանոցը, իսկ եթե այդ չհաջողվի, ապա կռվել մինչև արյան վերջին կաթիլը։ Ապստամբները հույս ունեին, որ քաղաքը կմիանա իրենց և օգնական ուժեր կստանան նաև շրջակա գյուղերից ու Կիլիկիայի հայությունից։

Այդ օրերին Մարաշից մի գումարտակով Զեյթուն է ժամանում հաղարապետ Սուլեյմանը։ Լսելով այդ մասին, չնայած ուշացումով, բայց և այնպես վանքում գտնվողները որոշում են հարձակվել քաղաքի վրա, գրավել կառավարական տունը։ Նրանց այդ մտադրության մասին իմանալով, Զեյթունի վերնախավը տեղեկացնում է կառավարողներին, որոնք զորանոցից զգալի չափով ուժեր են ուղարկում քաղաք և կազմակերպում են քաղաքի և կառավարական տան պաշտպանությունը։ Ապստամբները ոչնչի առաջ կանգ չառնելով, հարձակվում են, հուսալով, որ կռվի ընթացքում ամբողջ քաղաքի բնակչությունը կմիանա իրենց։ Սակայն վերնախավի կողմից բնակչության շրջանում մի ամսից ավելի տարվող աշխատանքն իզուր չէր անցել։ Ժողովրդի մեծամասնությունը, հավատալով Թուրք կառավարողներին և վերնախավի սուտ խոստումներին, չմիացավ ապստամբներին։

Ինքնապաշտպանությունից ձեռնպահ մնացին նաև Ֆոնուզ, Շիվիլիկի, Ավագկալ, Պունոուզ և այլ գյուղերի բնակիչները։ Դեռ ավելին. ամեն կողմից լեռնականներին համոզում էին հրաժարվել դինված պայքարից։ Մարաշի հայերը հանձնաժողով ուղարկեցին զեյթունցիների մոտ և խորհուրդ տվեցին նրանց չմիանալ ապստամբներին։ Մարաշցիները լեռնականների մոտ ուղարկեցին գերմանացի Հերպլանկին, լուսավորչականներից՝ Տեր-Սահակին, հայ կաթոլիկներից՝ Տեր Խորենին և բողոքականներից՝ Ահարոն Շիրաճյանին[29]։ Մարաշի հանձնաժողովի մեկնելուց հետո օսմանյան կառավարողները դատարկեցին քաղաքի վարչական շենքը, տեղափոխեցին իրենց գույքը և պահեստում ունեցած հացահատիկը, որ որպես հարկ նրանք հավաքել էին Զեյթունի շրջակա գյուղերից։ Դրանից անմիջապես հետո վրա հասած Թուրքական 10 հազարանոց բանակը դիմադրության չհանդիպելով, գրավեց գյուղաքաղաքը։

1915 թ. մարտի 14-ին կառավարության զեկավարների և զորանոցի հրամանատարի հրամանով Թուրքական բանակի ուժերը վաշտ առ վաշտ շարժվում են դեպի Զեյթունի հինավուրց վանքը։ Վանքը գրավելու համար թշնամին օգտագործեց ոչ միայն հետեակային ուժեր, այլև թնդանոթներ։ Թուրքական բանակին, զգալի կորուստների գնով, հաջողվեց գրավել վանքի մոտ գտնվող այգիները։ Լեռնականներին այդ չվհատեցրեց, նրանք ավելի ուժեղացրին կրակը և կարողացան կասեցնել Թուրքերի հարձակումը։

Թուրքական հրամանատարությունը կարգադրում է թնդանոթներով ռմբակոծել վանքը, որի հետևանքով բանդվում է վանքի պարսպի մի մասը։ Սակայն հանդիպելով պաշարվածների կատաղի դիմադրությանը, Թուրքական զորքերը երեկոյան վերադառնում են զորանոց։ Նրանք նախապատրաստվում են հաջորդ օրը նոր ուժով շարունակելու իրենց հարձակումը վանքի վրա, բայց

29 Մատենադարան, ..., թղթ. 240ա, վավ. 75, էջ 151։

ապստամբները հենց այդ գիշեր թողնում են վանքը և հեռանում լեռները։ Նրանց մի մասն անցնում է Ֆրնտրճակ, իսկ մնացածները՝ Ամանոսի լեռները և կռվում են մինչև գինեղապար հայտարարելը։ Կենդանի մնացած ապստամբների հուշերից պարզվում է, որ լեռնական կտրիճների այդ փոքրիկ ջոկատը ամիսներ շարունակ կռվի վնասներ էր հասցնում հետապնդող թուրքական զորքերին։ Ճիշտ է, փոքրաթիվ ուժերով նրանք չէին կարող ճակատ առ ճակատ հանդես գալ թշնամու դեմ, բայց հետապնդողներին դդալի կորուստներ էին պատճառում դիպուկ և սրընթաց հարվածներով։

Հաջորդ օրը թուրքական զորքերը գրավում են վանքը, հրկիզում այն և վերածում են մոխրակույտի։

Լեռնականների ապստամբության անհաջողությունը խոր ազդեցություն թողեց շրջակայքի հայ բնակչության վրա։ «Զեյթունի ապստամբության՝ այսպիսի տխուր վախճանի մը հասնելը,— գրում է ժամանակակիցներից մեկը,— ողբալի դրություն մը ստեղծեց մեր հայրենի կյանքին մեջ»[30]։

Վանքը գրավելուց անմիջապես հետո թուրքական կառավարողները մշակեցին գյուղաքաղաքի և գավառակի գյուղերի ժողովրդին տեղահան անելու իրենց դիվային ծրագիրը։ Նրանք գավառակի գյուղերից եկածներին ստիպեցին 24 ժամվա ընթացքում հեռանալ Զեյթունից։ Դրանից հետո թուրքական գինվորական ուժերը սկսեցին լեռներում հետապնդել ապստամբներին։

1915 թ. մարտի 26-ին թուրքական իշխանությունները Զեյթունի վերնախավին, ինչպես նաև վանքի ապստամբների ընտանիքներին հայտնեցին, որ նրանք ժամանակավորապես պետք է թողնեն Զեյթունը։ Շուտով Զեյթունից դեպի Մարաշ շարժվեց աքսորականների առաջին քարավանը, ըստ որում դրանք այն ընտանիքներն էին, որոնք շատ ջանք թափեցին ապստամբներից քաղաքն անջատելու համար։

Ըստ Տ. Անդրիասյանի, ապրիլի 9-ին զորանոց բերվեց վերնախավի մեծ մասը, մի քանի օր հետո արտաքսվեցին վերնախավի ևս 60 ընտանիք[31]։

1915 թ. ապրիլի 1-ին տեղահանվեց Զեյթունի վանքի թաղի ամբողջ բնակչությունը քաղաքի մի քանի ընտանիքների հետ միասին։ Այդ թաղի բնակիչները «բոլոր բառին բուն նշանակությամբ մերկ և անոթի ճամբա տրված էին անոնք ոչ գույք ունեին հետերնին, ոչ գրաստ և ոչ էլ ճամբու պաշար, իրենց տունները օրեր առաջ այրեր և վերջացեր էր միջի պարունակությամբը միասին. և խեղճերը այդ օրեն ի վեր քաղաքը իրենց ապգականներու քով կը պատսպարվեին»[32]։

Վերապրող զեյթունցիները միաբերան հաստատում են, որ թուրքական պաշտոնյաները ժողովրդին համոզել են, թե այդ տեղահանությունը կարճատև միջոցառում է և բոլոր ընտանիքները ապահով կհասնեն իրենց համար նշանակված վայրը, իսկ նրանց կյանքին ոչ մի վտանգ չի սպառնա։ Վերը նշված պրոպագանդը թուլացնում էր բնակչության՝ զենքը ձեռքին պայքարելու ձգտումը։ Իրականում, տեղահանությունից անմիջապես հետո գյուղաքաղաքը բնակեցվում էր առնառատ և պոշնակ կոչվող թուրքմեն ցեղերով. «Զեյթուն տեղա-

---

30 Ավետիս դ. Թերեյան, Դրվագներ ապրիլյան մեծ եղեռնեն, Պեհեսնիժայստյան։ Դողգոթան (1914—1918) Պեյրութ, 1956, էջ 21։

31 Տ. Անդրիասյան. Զեյթունի տարեգրությունը, էջ 29։

32 Մատենադարան, Այլ և այլ հեղինակների արխիվ. թղթ. 240ա. վավ. 75. էջ 188։

հան եղած ժամանակ թույլ չեն տար ժողովրդին իրենց հետ առնել ոչ դույր և ոչ ալ փոխադրության միջոց։ Միայն ունեին իրենց կրած հագուստը և երեք-չորս օրվան պաշար։ Զեյթունը հայերեն դատարկելն անմիջապես ետքը կը լցնեն ռումելցի թուրք գաղթականներով[33]։

Այսպես ուրեմն, թուրքական կառավարողներն ու պինվորները, որոնք վանքի ապստամբության օրերին վախենում էին անգամ շրջել գյուղաքաղաքում, իրադրությունը փոխվելու հետ միասին ոչ միայն այրեցին վանքը և նրա թաղի տները, այլև բնակիչներին դուրս շպրտեցին հայրենի գյուղաքաղաքից։

Բազմաթիվ վկայություններից երևում է, որ զեյթունցիների տեղահանությունը կատարվել է չափազանց դաժան մեթոդներով։ «Չափահաս այրեր և կիներ,— գրում է ականատեսը,— երիտասարդ մայրեր և աղջիկներ կը խորհեին, թե պիտ հաջողին անոթի երկու օրեն Մարաշ հասնել, բայց ո՞ւր ձգել փոքրերը, որոնք անոթությեն շատ ստիպված էին բորիկ ոտքով կիսամերկ մարմնով անընդհատ քալելուն. այդ պայմաններու տակ տեսա երբեմն հայ մայրեր, որոնք իրենց ծծկերները կը նախընտրեին այդ վայրկյանին ճամբու վրա ձգել ու երթալ, քանի որ իրենց վիճակն անորոշ և անտանելի էր»[34]։

Վանքի թաղի քարավանը երկու օրում հասավ Մարաշ և մի քանի օրից հետո ուղղություն վերցրեց դեպի Պաղչե, Օսմանիե, ապա Տարսուս (Տարսոն), որտեղից էլ Կոնիա և ապրիլի 29-ին հասավ Սուլթանիե։ Սա մի տեսակ հավաքատեղի էր, ուր թուրքական ջարդարարները հավաքել էին Կոստանդնուպոլսից, Կոնիայից, Պարտիզակից, Ատարազարից, Իզմիրից, Արմաշից և այլ վայրերից քշված հայ ընտանիքներ[35]։

Ականատեսներից մեկը զառնությամբ է վերհիշում լեռնականների քարավաններից մեկին, որին նա հանդիպել է Այնթապում. «Տխուր երեույթ մը պարզվեցավ մեր աչքին։ Զանազան չոարիքի և հասակի հայուհիներու, ծերերու և մանուկներու, հազարավոր հոգիե բաղկացած բազմություն մրն էր կարավանը։

Զոհերը լեռ ու ձոր շարաթներով քալելեն հոգնած և ուժասպառ, խարազաններով զինված, անգութ ոստիկաններու վախեն սարսափահար և վիրավոր ոտքերով, ինկած էին բարբարոտ գետնի մը վրա...»[36]։

Հալեպի կուսակալ Ճելալ բեյի խոստովանությունից երևում է, որ կառավարությունն ամենից շատ վախեցել է Զեյթունի լեռնականներից և պահանջել անմիջապես տեղահան անել ժողովրդին, սակայն կուսակալը այն մարդկանցից էր, ովքեր հասկանում էին տեղահանությունների հետևանքները և այդ պատճառով էլ հրաժարվում է կառավարության պահանջը կատարելուց։ Իմանալով այդ մասին, կառավարությունը Մարաշն առանձին կուսակալություն է հայտարարում, Ճելալին տեղափոխում ուրիշ տեղ, որից հետո միայն տեղահան են արվում լեռնականները։

Մեր պատմագրության մեջ ապրիլյան եղեռնի սկիզբը համարվում է 1915 թ. ապրիլի 24-ը։ Սա այն օրն էր, երբ Կոստանդնուպոլսում բանտարկվեցին հայ մտավորականները։ Սակայն լեռնականների տեղահանությունը սկսս-

---

33 «Ազատ և վերածնունդ», էջ 31։

34 Մատենադարան, ..., թղթ. 2400ա, փաստ. 75, էջ 189։

35 Նույն տեղում, էջ 195։

36 Ավետիս դ. Թեքեյան, Դրվագներ ապրիլյան մեծ եղեռնեն, Պեյրութ, 1956, էջ 55։

վել էր դրանից առաջ և նրանց բարավանները մայիսի կեսերին արդեն Սուլթանիեում էր, որտեղից նրանք պետք է գնային Տեր-Զորի անապատները։

Հայերի հետ ունեցած խոսակցության ժամանակ Հալեպի կուսակալ Ճեվալը ասել է. «Տեսեք, ես Հալեպի կուսակալն էի. ինձի հրաման եկավ, որ գնա և զեյթունցիները տեղահան բրեւ։ Ես ալ բսի, թե Զեյթուն կերթամ, եթե հոն հանցավոր մարդիկ գտնեմ՝ պատերազմական ատյանի կհանձնեմ, եթե դատապարտվին՝ մահվամբ կը պատժիմ դանոնք. բայց մեղավորներն ու անմեղները անխտիրաբար, կին, աղջիկ, մանուկ տեղահան չեմ բներ։ Դիտե՞ք թե հետո ինչ բրին։ Մարաշը անկախ կառավարություն հայտարարեցին և ուղղակի Պոլսո հետ կապեցին, և Թալեաթի հրամանով Զեյթունը տարագրեցին և զեյթունցիները փչացուցին»[37]։

Նշենք, որ հայերին բնաջնջելու գաղտնի հրամանից դեռ շատ առաջ, որը տրված է 1915 թ. մայիսի 15-ին և որի տակ ստորագրել են Ներքին և ռազմական նախարարներ Թալեաթը և Էնվերը ու Իթթիհատ կուսակցության բարեւոդար գոկտոր Նազիմը, արդեն սկսվել էր տեղահանության գործը։ Այդ հրամանի մեջ նրանք գտնում էին, որ Անգլիայի և Ռուսաստանի միջև եղած հակասությունների պատճառով այդ պետությունները պատերազմի հաջող ելքի դեպքում չեն կարող իրար մեջ բաժանել Թուրքիայի հողերը և այդ պատճառով էլ հնարավոր է, որ այն հանձնեն մի ժողովրդի, որը կարող է իրենց շահերին ծառայել։ Այդ ժողովուրդը նրանք համարում էին հայերին և այդ պատճառով էլ առաջարկեցին տեղահան անել նրանց։

«Երբոր իրավատեր այդ ժողովուրդը,— գրված էր այդ հրամանում,— հայն միայն կբնա բլլա։ Ասված մի արասցե, մեր պարտության հաջորդող հաշտության մը բանակցություններեն ինքնին դուրս պիտի գա «Հայկական հարցը», որ տրդեն կես դարե ի վեր միջազգային հանդամանք առած ու սպառնալի ցցված է մեր կուրծքին։

Ուրեմն մեր հայրենիքը, ազգը, պետությունն ու կրոնը, այդ տեսակ հայատեսական մեծ վտանգի մը դեմ պաշտպանելու համար, իսլամ և թուրք ժողովուրդը ներկայացնող կառավարությունը և իթթիհատ թերաբը կոմիտեն, միացած ուժերով, ինչ որ ալ պատահի, ոեվ հաղթության սեղանի վրա, ոեվ ձեռով Հայկական հարցի մը դրվիլը կանխելու համար, օգտվելով պատերազմին մեկ բերած սա անկախությենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել դայն, բնաջնջելով այդ անհարատատ ոարրը՝ բշելով դանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին»[38]։

Ինչ խոսք. հայ ժողովրդի այդ արյունկալ թշնամիները միաժամանակ պատճառաբանում էին այդ հարցը նաև նրանով, որ Թուրքիայի դեմ կռվող բանակներում կային հայ կամավորական ուժեր, երկրի ներսում կային հայ կուսակցություններ և վերջապես ժողովրդի մոտ գտնվում էր նաև որոշ չափով զենք ու զինամթերք։ Այս բոլորը սոսկ պատրվակներ էին։ Փաստը մնում է փաստ, որ Բեռլինի վեհաժողովից հետո թուրքական կառավարությունը տանում է հայերին ֆիզիկապես բնաջնջելու քաղաքականություն, նրա դեմ միշտ

---

37 Աշճյան Համբարձում. Ատանայի եղեռնը և Գոնիայի հուշերը. Նյու-Յորք. 1950, էջ 178։

38 Ժամկոչյան Արսեն. Գրվագներ հայկական եղեռնեն և վերածնունդ. Փարիզ. 1946, էջ 179–181։

երևում էր այդ հարցի ուրվականը, որը նրան հանգիստ չէր տալիս և հայկական հարցի լուծումը նա տեսնում էր միայն ու միայն հայերին ոչնչացնելու մեջ։ Այդ դիվային ծրագրի իրագործման ճանապարհին պատրվակներ ու պատճառներ գտնելը այնքան էլ դժվար չէր թուրքական կառավարության համար։

Իթթիհատի գործադիր կոմիտեի նիստերից մեկում Պեհլեանին Շաքիրը գտնում է, որ անհրաժեշտ է անմիջապես սկսել և վերջացնել հայերի տեղահանության հարցը, որի ընթացքում պետք է կոտորել ժողովրդին. «Պատերազմի մեջ ենք,— ասում է նա,— Եվրոպայի և մեծ պետությունների միջամտության վախ չկա. աշխարհի մամուլն ալ չի կրնար բողոք բարձրացնել. եթե ըլլա իսկ, ոչ արդյունք չունենար. առաջիկային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա»[39]։

Իթթիհատի գործադիր կոմիտեն, սակայն, նախատեսում էր այդ տեղահանությունը և կոտորածը կատարել ոչ թե բանակի և ոստիկանության միջոցով, այլև բանտերից ազատել ոճրագործներին, մարդասպաններին և նրանց հանձնել այդ գործը։ «Զինվոր մը,— ասում է Շաքիրը,— կաթնկեր մանուկ մը մորը գիրկեն հափշտակելով, մորը աչքերուն առջև չի կրնար գլուխը ջախջախել. չի կրնար և թերևս մայրն ալ փրկելու կաշխատի, տրված հրահանգին գործադրությունը իր զինվորական պատվույն հակառակ կը գտնե, և կրմրոստանա։

Նույնպես՝ զինվոր մը անկարող, ձեռքերը կապված ծերուկի մը կուրծքին չի կրնար իր սվիներ մխել. ծերին գթալ պարտականություն կը համարե. այս վայրագությունը հերոսություն չի նկատեր»[40]։

Առաջին երեք քարավաններից հետո մի քանի օր գյուղաքաղաքում մարդիկ չեն տեղահանվում։ Թուրքական ուժերն այդ ժամանակամիջոցում շրջապատում են Զեյթունը։ Ապրիլի վերջերին Վերին թաղի բնակիչները՝ թվով 300 տնտեսություն, հրաման են ստանում թողնել քաղաքը։ Այս թաղն աքսորվում է այն ժամանակ, երբ գավառակի գյուղերն արդեն անմարդաբնակ էին։ Մի քանի օր անց Պողպայրի, Գարբկլարի և Միջին թաղի բնակիչների կարավաններն իրար հետևից բռնում են աքսորի ճամփան։ Մայիս ամսին արդեն Զեյթունում ոչ մի հայ չի մնում։

Զեյթունի այն բնակիչները, որոնք աքսորվեցին ապրիլի 20-ից հետո, ուղարկվեցին Տեր-Զորի անապատները, որտեղ տաք խորշակն իր դաժանությամբ պետք է հնձեր կլիմայի անսովոր լեռնականների շարքերը։ Վերջին քարավանների ներկայացուցիչներին թույլատրված էր Կոնիայում բարեկամներ կամ ազգականներ ունենալու դեպքում մնալ այնտեղ, իսկ մնացածները Տեր-Զոր։ Այսպես ուրեմն, այս բոլորից հետո մեկընդմիշտ դատարկվեց արծվաբույնը, որը դարեր շարունակ հայ ազգային-ազատագրական շարժման ամենախոշոր կենտրոններից մեկն էր եղել։

Լեռնական զեյթունցիներն աքսորի ճամբան բռնեցին մի քանի ուղղություններով։ Մոտ 8.000 կանայք և երեխաներ քշվեցին Կոնիա, 5.000 հոգի՝ Հալեպ, մնացածները՝ Տեր-Զոր, Ռաքքա և մինչև Բաղդադի մոտերքը։ «Կոնիայի կողմերը դրկածները,— պատմում է ականատեսը,— այն աստիճան թշվառ վիճակի մեջ կը գտնվեին, որ Պողանթիեն բիչ մը անդին գտնվող Գարա-Բու-

39 «Տեր-Զորը», Փարիզ, 1955, էջ 258։
40 Նույն տեղում, էջ 264։

նարի կայարանը 6.000-ի վրա օրական 150—200 հոգի կը մեռնին անոթութենե։ Զեյթունի ընդ. բնակչությունը 26.000 հոգի բլլալով, 19.000-ը բշված են Միջագետքի շրջանը, որ ջարդված են ամենամեծ մասամբ»[41]։

Թուրքական կառավարության ոճրագործ ծրագրի համապատասխան տեղահան արվեցին ոչ միայն Զեյթուն գյուղաքաղաքի և նրա գավառակի, այլև Այրիստանի, Մերսինի, Յարփուղի, Ադանայի, Սսի, Տարսոնի, Կեոքսյունի, Հաճընի, Այնթափի, Քիլիսի և Կիլիկիայի մնացած վայրերի հայ բնակիչները։ Նրանց մի մասը ուղարկվեց հենց ճանապարհին, իսկ մյուս մասը դարձավ անապատի դաժան կլիմայի, սովի և հիվանդությունների զոհ։ Ապատվածների մի մասն էլ ցիրուցան եղավ հողագնդի տարբեր մասերում։ Տեր-Զորի անապատն ուղարկված 7.000 զեյթունցիներից և ոչ մեկը կենդանի չմնաց։ Տարագրությունից անմիջապես հետո, երբ գյուղաքաղաքը բնակեցվում է թուրքական ցեղերով, փոխվում է նրա անունը. սկզբից այն անվանվում է «Ենի շեհիր», իսկ հետագայում և այժմ էլ կոչվում է Վանքի կոիվներում սպանված հայարապետ Սուլեյմանի անունով՝ «Սուլեյմանլը»։

Ինչպես տեսնում ենք, Կիլիկիայի հայ բնակչության ճնշող մեծամասնությունը հնազանդվում է թուրքական կառավարության կամքին և բռնում է աքսորի ճամփան։ Սակայն եղան գյուղեր և անհատներից կազմված խմբեր, որոնք արհամարհեցին մահը, բարձրացան Տավրոսի անմատչելի լեռնագագաթները, միացան այնտեղ գտնվող ապստամբներին և որոշեցին չհանձնվել թուրքական իշխանությունների ողորմածությանը, կռվել մինչև մեռնելը։ Լեռներում եղած ապստամբներին միացան նաև թուրքական բանակից փախած հայ երիտասարդները։ Սրանք անմատչելի վայրերում պարեն և զինամթերք կուտակեցին ապագա կռիվների համար։

Կառավարությունը մի զորամաս ուղարկեց լեռները պատսպարված-ներին ճնշելու համար։ Այս զորամասին միացան Զեյթունում բնակված առնաուտ և պոշնաղ ցեղերի կռվող տղամարդիկ։ Լեռներում թաքնված մարդիկ հիանալի զիտեին իրենց հայրենիքի անմատչելի վայրերը, նրանք թաքնվում էին այդտեղ և հանկարծակի հարձակվում թուրքական ջոկատների վրա։ Լեռնական զեյթունցիների թիվը հասնում էր մոտ 100-ի, այդ խմբի կողքին լեռներում ապրում ու թշնամու դեմ պայքարում էին նույնքան ֆենուզցիներ։

Զեյթունի տեղահանությունից մի քանի ամիս հետո 1915 թ. հուլիսին և օգոստոսին Մարաշում մի քանի օրվա ընթացքում դատաստան են տեսնում բանտարկված 200 զեյթունցիների հետ։ Նրանցից 40-ը գնդակահարվում են, որից հետո յուրաքանչյուր օր 10—15 հոգու կախաղան բարձրացնում։ Միայն նրանց մի փոքրիկ մասը՝ երկու տասնյակից ավելի մարդ, 15-ական տարվա բանտարկության դատապարտվելով, երկու խմբով ուղարկվում է Տեր-Զոր, Հալեպ և Տիգրանակերտ։

Զեյթունի վերջնական տեղահանությունից հետո ապստամբների մի մասն անցնում է Ֆրնտրճաղ գյուղի մոտ գտնվող Դարանամիտ անտառը։ Սա 500 տնտեսությունից բաղկացած հայկական գյուղ էր և գտնվում էր Զեյթունից դեպի արևմուտք, 6 ժամվա հեռավորության վրա։ Մարաշի շրջակայքի թուրք բնակչությունը Ֆրնտրճաղն անվանել է Երկրորդ Զեյթուն։ Իր քաջ լեռնական-

41 «Հուշամատյան մեծ եղեռնի», Պեյրութ, 1965, էջ 482։

42 Տ. Անդրիասյան, Զեյթունի տարեգրությունը, էջ 80։

սերով, անմատչելի ձորերով, դժվարանցանելի ճանապարհներով այն ժողովրդի պաշտպանության հիանալի անկյուն է եղել։ Գյուղի բնակչությունը գեյթունցիների ջոկատից մանրամասն տեղեկություններ քաղելով Զեյթունի և նրա շրջակա գյուղերի տեղահանության մասին, ապստամբություն է բարձրացնում, որոշում է չենթարկվել թուրքական կառավարողներին և ջոկատի մարտիկներին խնդրում մնալ իրենց գյուղում և միասին պայքարել թշնամու ուժերի դեմ։ Թուրքական ջարդարարների նախօրոք կազմած պլանով Ֆրնտրճագ գյուղի բնակչությունը պետք է տեղահանվեր, իսկ բնակիչները գեյթունցիների օրինակով բշվեին հեռուները։ Զեյթունի վանքի պաշտպաններից միայն 40 հոգի էն հասնում Ֆրնտրճագ։ Թուրքական իշխանություններն իմանում են նրանց՝ գյուղը ժամանելու մասին, բայց սկզբնական շրջանում ոչ մի միջոցառում չեն ձեռնարկում վերջիններիս նկատմամբ։ Ֆրնտրճագում գտնվող 0մար Բեյը գիտեր լեռնցի ապստամբների տեղը, սակայն ցանկանում էր նրանց նկատմամբ սիջոցներ ձեռնարկել Սարաշից նոր ուժեր ստանալուց հետո միայն։ Այս նպատակով նա մեկնում է Մարաշ և վերադառնում նոր գինվորական ուժերի հետ միասին։ 1915 թ. հունիսի 26-ին նա իր հրոսակախմբերի գլուխն անցած պաշարում է այն տունը, որտեղ գտնվում էին Վանքի պաշտպանության մասնակցած լեռնականները։ Իմանալով այդ մասին, Ֆրնտրճագ գյուղի բնակիչներն հարձակվում են թուրքական ուժերի վրա։ Ընկնելով ֆրնտրճագցիների և լեռնական գեյթունցիների կրակի տակ, թուրքական ուժերը ջախջախվում են։ Լեռնականների ձեռքն է անցնում 30 հրացան, մեծ քանակությամբ փամփուշտ և 10 ձի[43]։ Այս մարտից հետո ֆրնտրճագցիները և նրանց մոտ գտնվող գեյթունցիները լուրջ նախապատրաստվում են ինքնապաշտպանության։ Մարաշի կառավարությունը պատվիրակություն է ուղարկում ապստամբների մոտ և խոստումներ է տալիս նրանց, սակայն ապստամբները պատասխանում են. «Մենք մեր գենքերը չենք հանձներ և մեր գյուղն ալ չենք հեռանար։ Մենք կուգենք քաջաբար մեռնիլ, ոչ թե ապավինիլ. ստրկաբար. այսպես ըսեք ձեր ղրկողներուն»[44]։

Ֆրնտրճագի ապստամբների շարքերում էին ոչ միայն գեյթունցիներ, այլև Տերեքոյ և Քիշիֆի գյուղերի բնակիչները։ «Հոն տեսարանը սրտաճմլիկ էր, մանուկներ, ծերեր, պառավներ կաղոթեին, կուլային... մայրը փնտրող մանկիկներ, վիրավորներ, չեմ գիտեր, ինչպես պարդեմ տեսածներս»[45]։

Ջեմալ փաշան, որ այդ ժամանակ գլխավորում էր Կիլիկիայի հայերի տեղահանությունը, Սահակ Խապայան կաթողիկոսին տված իր հեռագրերից մեկում, Ֆրնտրճագի դեպքերը համարում է Կիլիկիայի ժողովրդի տեղահանությունն արագացնող պատճառ։ Սա հորինված սուտ էր օսմանյան սատրապի կողմից, որովհետև Կիլիկիան արդեն դատարկվել էր բնակիչներից, երբ Ֆրնտրճագցիները գենքի դիմեցին։ Այդ հեռագրում կարդում ենք.

«Հայ կաթողիկոսություն։ Հալեպ

Պատասխան—կը ցավիմ, որ Ֆրնտրճագի դեպքը տարագրության հետաձգման կատարելությունը չթողուց, այսուհանդերձ հայ ընտանիքները ամեն

---

43 Ադամյան Դավիթ, Կիլիկյան դրվագներ, Ֆրնտրճագի ճակատամարտը, Փարիզ, 1921, էջ 28։

44 Նույն տեղում, էջ 30։

45 «Զեյթունի պատմագիրքը», էջ 960։

տեսակ թշվառությունն ղերծ պահելու համար ամեն կողմ նորեն հրամաններ տվի։

Չորրորդ բանակի հրամանատար և ծովային նախարար Ահմեդ Ճեմալ»[46]։

Ապստամբներն ունեցել են ընդամենը 300 կովողներ, 250 «Մարտին» սիստեմի հրացան՝ 40.000 փամփուշտներով։ Այս զենքերի մի մասը գտնվել է ապստամբների մոտ, իսկ մյուս մասը նրանք ձեռք էին բերել Օմար Բեյի զորքերի հետ ունեցած ընդհարման ժամանակ։ 1915 թ. հուլիսի 31-ին 8.000-անոց թուրքական բանակը, զնդապետ Կալիպ բեյի գլխավորությամբ, շարժվում է դեպի Ֆրնտրճաղ[47]։ Օգոստոսի 1-ին թշնամին թնդանոթների որոտով և զնդացիրների ու հրացանների կրակոցներով սկսում է հարձակումը։ Մի ամբողջ օր ապստամբները դիմադրում են հերոսաբար։ Թշնամին մեծ զոհերի գնով կարողանում է մի դիրք միայն գրավել։ Որոշ ժամանակ անց, թուրքական գերազանց ուժերը ճեղքում են ապստամբների շղթան և մխրճվում գյուղ։ Սկսվում է դաժան ու ահավոր մարտը գյուղի փողոցներում։ Ապստամբների մի մասին հաջողվում է ճեղքել օղակը, դուրս գալ պաշարումից ու ապաստանել անմատչելի լեռներում։ Այսպես է վերջանում Ֆրնտրճաղի հերոսների ինքնապաշտպանությունը, որին զոհ են դառնում 2.100 հայեր, 2.000 թուրք զինվորներ ու 4—5 հազար բաշիբոզուկներ[48]։

Մյուս օրն առավոտյան թշնամին մտնում է գյուղը, բնակչությունը ապաստանած է լինում գյուղի եկեղեցում։ Դուրս եկողներն անմիջապես զնդակահարվում են, իսկ մնացածները կենդանի այրվում բոցերի մեջ։ Նույն առավոտյան սպանվում են 91 երիտասարդներ, իսկ 100-ից ավելի մարդ ուղարկվում են Մարաշ, որոնք այրվում են կրի վառարանների մեջ։

Գրելով Կիլիկիայի, այդ թվում նաև Զեյթունի գավառակի ժողովրդի տեղահանության մասին, հարկ է նշել, որ բացի Ֆրնտրճաղից, Արևմտյան Հայաստանի այլ վայրերում ևս ժողովուրդը զենքը ձեռքին պայքարում էր իր գոյության համար։ Այդ պայքարում վառ էջեր գրեցին Վանի բնակիչները, որոնք իրենց հայրենի քաղաքը բարիկադների վերածելով, պահպանեցին սեփական գոյությունը։ Զարդարարներին դիմադրեցին նաև Շապին Գարահիսարի, Ուրֆայի և այլ վայրերի բնակիչները։

Թշնամու անողոք սուրն ստիպեց Սուետիայի մի քանի գյուղերի հերոսական ժողովրդին՝ ինքնապաշտպանության այնպիսի հիանալի օրինակ ցույց տալ, որը միշտ անմոռաց կմնա մեր ժողովրդի պատմության մեջ։

Այսպիսով, տեղահան արվեց ու ոչնչացվեց հայ ժողովրդի հսկայական մի հատված՝ 1,5—2 միլիոն մարդ։ 1915 թ. մայիսի վերջերից հունիս և հուլիս ամիսներին ամբողջ աշխարհին հայտնի դարձավ հայ ժողովրդի արևմտյան հատվածի ողբերգության մանրամասնությունները։ Մի բանի հարյուր տարվա ազատագրական դաժան պայքարը վերջացավ հայ ժողովրդի արևմտյան հատվածի մեծ մասի բնաջնջումով։

---

46 «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիոյ», էջ 290—291։

47 Գր. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, էջ 52։

48 Նույն տեղում, էջ 54։